



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն  
18 մայիսի 2017 թվականի N 102-Ա

## «ԳՈՐԻՍԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.9-րդ կետի 8-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2017 թվականի մայիսի 10-ի N 100-Ա կարգադրությունը՝

### Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ.

1. Տիգրան Աղաբեկյանին 2017թ. մայիսի 19-ից նշանակել «Գորիսի մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2. «Գորիսի մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Աշոտ Ասրյան

Սաքո Դավթյան

Գայա Հարությունյան

Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)  
Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ  
Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ:

3. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել ետոյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:



Ս Յ Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Չ Պ Ե Տ  
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ